



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

ՈՐՈՇՈՒՄ

N 55

ք. Եղեգնաձոր


«25» հուլիսի 2008թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՅ-728 հրամանագրի 1.5-րդ կետի ա/ ենթակետի 1.6 կետի և «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1999թ. նոյեմբերի 24-ի ՀՕ 24 օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 10-ի նիստի N 27 արձանագրությամբ տրված հանձնարարականի

Ո Ր Ո շ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված կարգից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:



Վ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ